

---

**ՑԱՐԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
**ԵՎ ՀՅՐ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ (1908-1912 թթ.)**

ՋԵԼՈՅԱՆ Ա. Ռ.

1905-1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխությունը ցնցեց ինքնակալության հիմքերը: Մակայն այդ հեղափոխությունը չկարողացավ տապալել միապետական կարգերը: 1906 թ. ապրիլի 26-ին կայսրության ներքին գործերի նախարար է նշանակվում Պյոտր Ստոլիպինը, որը նույն թվականի հուլիսի 8-ին ստանձնում է նաև նախարարների խորհրդի նախագահի պաշտոնն ու հենց այդ օրը ցրում առաջին պետական դուման: Նույն ճակատագրին արժանացավ նաև երկրորդ գումարման պետական դուման:

Պ. Ստոլիպինի անվան հետ են կապված հետհեղափոխական հետադիմության (ռեակցիայի) երկար տարիները, ռազմադաշտային դատարանների հիմնումն ու 1907 թ. հունիսի 3-ի ակտի հրատարակությունը (որով ցարը ընտրական օրենքի փոփոխության իրավունք ստացավ): Նրա վարած քաղաքականության հետ է կապված նաև Հայ Յեղափոխական Դաշնակցության մեծ դատավարությունը, որի գործընթացը սկսվեց ռեակցիայի ծավալման ժամանակաշրջանում՝ 1908-ին և ավարտվեց Ստոլիպինի մահվանից՝ հետո՝ 1912 թ. մարտին: Այդ դատավարությունը ժամանակին այնքան մեծ ադմուլ հանեց, որ հետագայում ռուս գրող Վ. Կորոլենկոն այդ տարիների դատական ապարատը նկարագրելիս օգտագործում է «Լիժինի և Դաշնակցության գործի ժամանակաշրջան» արտահայտությունը<sup>2</sup>:

1908 թ. ապրիլից վարչապետ Ստոլիպինի և Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի միջև սկսվում է բավական աշխույժ նամակագրություն, որի գլխավոր թեման ՀՅԴ գործունեությունն էր: Հետաքրքիրն այն է, որ նամակագրությունն հաճախ ընդունում էր վեճի բնույթ, որտեղ Կովկասի փոխարքան հանդես էր գալիս պաշտպանվողի դերում: Իր նամակներում Պ. Ստոլիպինը մեղադրում էր Վորոնցով-Դաշկովին ՀՅ Դաշնակցության դեմ խիստ միջոցներ չրձեռնարկելու համար և նրան «հասկացնում», որ անհրաժեշտ է իր քաղաքականությունը հարմարեցնել Պետերբուրգի վարած քաղաքական գծի հետ: Փոխարքա Դաշկովին ուղղված առաջին նամակում (1908 թ. ապրիլի 11) Պ. Ստոլիպինը հիմնականում անդրադառնում է հայերին և ՀՅԴ-ին՝ վերջինիս վերագրելով Կովկասի հեղափոխական գործունեության գրեթե ամբողջ մասը<sup>3</sup>: Ստոլիպինը Վորոնցով-Դաշկովին (փոխարքա բառը փոխարինելով «տեղական իշխանություն» բառակապակցությամբ) մեղադրում է նրանում, որ նրա

---

<sup>1</sup> Պ. Ստոլիպինը մահացու վիրավորվեց 1911 թ. սեպտեմբերի 1-ին, Կիևի օպերայի թատրոնում, պահնորդական նախկին գործակալ Դ. Բոգրովի կողմից:

<sup>2</sup> Короленко В. Г. Собрание сочинений, т. 9, М., 1955, с. 657. Նիկոլայ Լիժինը առանձին կարևոր գործերի քննիչն էր Նովոչերկասկի շրջանում:

<sup>3</sup> Հայրենիք, Բոստոն, 1930, N 5, էջ 83-90:

աչքաթողության և մասամբ հայասիրության պատճառով ՀՅ Դաշնակցությունը Կովկասում ներկայացնում է մի այնպիսի ուժ, որը հարկ եղած դեպքում իր վրա է վերցնում դատական գործառույթը, փոխարինում է ոստիկանությանը, և «մի քանի նահանգներից և կենտրոնական հիմնարկություններից վերջին ժամանակներս եկող տեղեկությունները ցույց են տալիս, որ նույն այդ կազմակերպությունն իր առաջարկություններն է ներկայացնում մեր՝ դեպի Տաճկաստանը ունեցած առաջարկությունների հարցում... այսպիսով ներկայումս կառավարությունը իր դիմաց ունի իր ուժով և գործելակերպով սպառնալիք ներկայացնող մի հանցավոր կազմակերպություն, որը ամրապնդվել է տարիներ շարունակ այդ վտանգավոր երևույթին անտարբեր վերաբերվող տեղական իշխանության աչքի առաջ»<sup>4</sup>: Հետաքրքիրն այն է, որ այս նամակի պատասխանի մեջ (որի 15 էջից 10-ը վերաբերում էր Դաշնակցությանը) «հայասերի» համրավ ունեցող Կովկասի փոխարքան չէր էլ փորձում հերքել Մտոլիպինի գրածները և նույնիսկ չէր հետաքրքրվում, թե ինչու է նախարարապետը Կովկասի հեղափոխական շարժման մեջ միայն Դաշնակցությանը մեղադրում, այլ իր առարկությունները հիմնում էր սոսկ ժամանակագրական սխալների վրա՝ գրելով, որ ներքին գործերի նախարարի տեղեկությունները վերաբերում են այդ կուսակցության գործունեության 1903-1905 թթ. շրջանին և նշելով, որ այժմ (1908-ին) Դաշնակցությունը կորցրել է իր երբեմնի ազդեցությունը հայ գանգվածների վրա: Ավելին, փոխարքան հայ-թաթարական բախումների մասին բացատրություն տալիս գրում է. «Դաշնակցականները ցանկացան զուլիս կանգնել կովկասյան ամբողջ հեղափոխական շարժման, միացնել բոլոր ազգությունների հեղափոխական կուսակցությունները և նրանց բոլորին թելադրել իրենց վերջնական նպատակները»: Եվ քանի որ «հեղափոխությունից հեռու կանգնած մահմեդականությունը հաշվի չէր առնում և չէր էլ ցանկանում հաշվի առնել այդ կազմակերպությունները», դաշնակցականները սկսում են ահաբեկել թաթարներին, որոնք էլ իրենց հերթին վրեժ են լուծում, ու սկսվում են արյունալի բախումները երկու ազգությունների միջև<sup>5</sup>: Ինչպես գիտենք, դաշնակցականներին հետագայում մեղադրում էին հենց այդ ընդհարումներին մասնակցելու մեջ: Դժվար չէ նկատել, որ փոխարքայի նման բացատրությունները իրական հիմք չունեին: Հայտնի է, որ այդ ընդհարումները սադրում էին հենց իրենք՝ ցարական իշխանությունները:

1908 թ. ամռանը Վորոնցով-Դաշկովը պատրաստվում է ուղևորվել Պետերբուրգ: Տեղեկանալով այդ մասին՝ կայսրության կառավարության նախագահը ոստիկանական դեպարտամենտին հրահանգում է իրեն ներկայացնել այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են Կովկասին: Հետաքրքիր է այն փաստը, որ դեպարտամենտի ներկայացրած ընդարձակ զեկուցման մեջ, Կովկասի հեղափոխական շարժումների մասին խոսելիս, առյուծի բաժինը նորից վերագրվում է ՀՅԴ-ին: Վրացիների և թաթարների

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 89-90:

<sup>5</sup> Նույն տեղում, N 6, էջ 149-150:

մասին խոսելիս գրեթե չի շեշտվում վրաց սոցիալ-դեմոկրատիայի և սոցիալիստ-ֆեդերալիստների հեղափոխական գործունեության ոչ մի դեպք՝ կարծես թե Դաշնակցության մեղսակից դերն ավելի ընդգծելու համար: Համաձայն վերը նշված զեկուցման՝ հայերը համարվում էին Կովկասի ամենահակապետական տարրը, իսկ այդ տարրի կուսակցություն Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ներկայացվում էր որպես այնպիսի զինական ուժի տեր, որը իբր «հեղափոխական շրջանում հասնում է 100 000 մարդու, որի պահպանման համար ծախսվել է մինչև 10 միլիոն ռուբլի», և իբր «գոյություն ունի նաև ծրագիր Կարսը և Էրզրումը գրավելու մասին, որտեղ կուսակցությունը հնարավորություն ունի կենտրոնացնելու 60 հազարանոց մի բանակ» ու ամենասարսափելին, «Կուսակցությունը նպատակ է դնում, համագործակցելով պարսիկ և տաճիկ հեղափոխականների հետ», միաժամանակ մահափորձ կատարել սուլթանի և շահի դեմ, գուցե նաև կազմակերպել խիստ կարևոր ահաբեկչական գործողություն Ռուսաստանում (մահափորձ ցարի դեմ)<sup>6</sup>: Կովկասին վերաբերող կարևոր տեղեկությունները Ստոլիպինը ստանում էր ոստիկանական դեպարտամենտից, և մի թե՛ զարմանալի է, որ տեղեկանալով Դաշնակցության հեղափոխական և ռազմական մեծ ներուժին (որը հաճախ չափազանցված էր)<sup>7</sup>՝ հետադիմական ուժերի կուռքը որոշում է նախահարձակ լինել և ջախջախել Կովկասի ամենավտանգավոր կուսակցությունը, որը նույնիսկ պատրաստ էր ցարի դեմ մահափորձ կատարել (ՀՅԴ-ն այդպիսի նպատակ չի ունեցել):

1908 թ. վերջերից սկսած հակադաշնակցական, մասամբ նաև հակահայկական հալածանքները ուժեղացնելու համար ռուսական կառավարությունն ուներ նաև արտաքին պատճառներ: Դեռևս 1907 թ. դեկտեմբերի վերջերին (27-29) Փարիզում գումարվեց «Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի կոնգրեսը», որին մասնակցում էր նաև ՀՅԴ-ն: Որոշում կայացվեց մինչև 1909 թ. զինված ապրստամբություն կատարել և տապալելով սուլթանի բռնապետությունը՝ երկրում հաստատել սահմանադրական կարգեր: Հայտնի է, որ երիտթուրքական պետական հեղաշրջումը տեղի ունեցավ 1908 թ. հուլիսին, որով Թուրքիան հռչակվեց սահմանադրական միապետություն: Այդ գործում որոշակի դերակատարություն ունեցավ նաև ՀՅԴ-ն: Հայտարարված սահմանադրությամբ Դաշնակցությունն անցավ լեզալ (օրինական) գործունեության<sup>7</sup>: Օգոստոսի 3-ի շրջաբերականով ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմինը հանդես եկավ մի հայտարարությամբ, որ կուսակցության բոլոր մարմիններն այսուհետև գործելու են ազատ և անկաշկանդ: Ռուսական կայսրության համար անցանկալի էր իր վաղեմի թշնամի, ծերացած Թուրքիայի փոխարեն արևելքում տեսնել սահմանադրական նորաստեղծ Թուրքիա, առավել ևս նրա համար տհաճ էր զիտակցել, որ իր երկրում մեծ տարածում ունեցող հայկական կուսակցությունն այնքան ուժ ունի, որ կարող է գործուն մասնակցություն ցույց տալ իր

<sup>6</sup> Նույն տեղում, N 12, էջ 94-95:

<sup>7</sup> Դրոշակ, Ժնև, 1908, N 8, էջ 124:

հարևան երկրում կատարվող հեղաշրջմանը: Բացի դրանից, ռուսական կառավարությունը մինչ երիտթուրքական հեղաշրջումը որքան էլ հալածեր դաշնակցականներին, հասկանում էր, որ ռուս-թուրքական հնարավոր պատերազմի դեպքում կարող է օգտագործել սուլթանական ռեժիմից դժգոհ հայ մարտական կուսակցության ներուժը: Մակայն այժմ իրադրությունը փոխվել էր, և հնարավոր բախումների դեպքում դաշնակցականները հանդես կգային որպես թուրքական նոր կառավարության կողմնակիցներ:

Ռուսաստանի շահերը ՀՅԴ հեղափոխական գործունեության հետ բախվեցին նաև Իրանում: Բանն այն է, որ այդ երկրում ծավալված հեղափոխական շարժման երկրորդ փուլին (1908-1911 թթ.) գործուն մասնակցություն ցույց տվեց նույն Դաշնակցություն կուսակցությունը: Արդեն 1907 թ. փետրվար-մայիս ամիսներին Վիեննայում գումարված ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովը իրանական հեղափոխության վերաբերյալ Պարսկաստանի իր մարմիններին (Վրեժի և Շահաստանի ԿԿ-ներին) հրահանգում է «բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացմանը»<sup>8</sup>: Դաշնակցական Եփրեմ խանը (Դավթյան) նույնիսկ նշանակվեց սահմանադրական զինված ուժերի հրամանատար և Թեհրանի ոստիկանապետ. նա իրանական հեղափոխության առաջնորդներից մեկն էր և մեծ հռչակ էր վայելում հեղափոխականների կողմից: Եվ այստեղ էլ ցարական կառավարությունը, աջակցելով շահին ու հակահեղափոխական ուժերին, իր հակառակորդների ցանկում ակամայից տեսնում էր նաև Դաշնակցությանը:

Հենց սրանք էին ներքին ու արտաքին այն հիմնական գործոնները, որոնցից ելնելով՝ Ստոլիպինը որոշեց իր հարվածն ուղղել հատկապես Հայ Յեղափոխական Դաշնակցության դեմ: 1908 թ. դեկտեմբերին սկսվեցին առաջին զանգվածային խուզարկություններն ու ձերբակալությունները, որոնք մեծ ծավալ ստացան 1909 թ. գարնանը: «Թվում էր, թե այդ մի ընդհանուր հալածանք է հայ ինտելիգենցիայի դեմ, որովհետև դաշնակցականների հետ ձերբակալվում էին և շատ ոչ դաշնակցականներ, և նույնիսկ Դաշնակցության հակառակորդներ»<sup>9</sup>, - իր հուշերում գրում է Լեոն: Կովկասի հայության շրջանում սկսվեց մի իսկական խառնաշփոթ, խուզարկությունները չէին դադարում նույնիսկ գիշերները և կատարվում էին ամենաբիրտ ձևով: Որոշ քանակի նյութեր հավաքելուց հետո գործի քննությունը հանձնարարվեց Նովոչերկասկի շրջանի առանձին կարևոր գործերի քննիչ Նիկոլայ Լիժինին, որը արդարադատության նախարար Շչեգոլովիտովի հովանավորությամբ այդ գործի շրջանակում ստացել էր գրեթե անսահմանափակ իրավունքներ: Սա առաջին քաղաքական մեծ գործը չէր, որ վարում էր Լիժինը: Դեռևս «Դաշնակցության գործից» առաջ նրան էր վստահվել, այսպես կոչված, «Նովոռոսիսկյան հանրապետության» գործը, որը քննելու ընթացքում նա

<sup>8</sup> Նյութեր ՀՅ Դաշնակցության պատմության համար, հ. Գ, Պէրուսթ, էջ 310:

<sup>9</sup> Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 226:

կատարել էր մի շարք կեղծիքներ ու մեղադրվել օրենսդրության 361-րդ կետով<sup>10</sup>: Մակայն նույն նախարարի շնորհիվ նա ոչ միայն չպատժվեց, այլ նաև սկսեց վարել ոչ պակաս աղմկահարույց՝ հայ մարտական կուսակցության գործը:

Ձերբակալված հայերի թիվը գնալով մեծանում էր՝ արդեն 1909 թ. վերջերին հասնելով 500-ի: Դաշնակցության և հայերի հասցեին մեղադրանքների տարափ էին տեղում անգամ Պետական դումայի ամբիոնից Վ. Պուրիշկինիչը<sup>11</sup>, Ն. Մարկովը<sup>12</sup> և նրանց կողմնակիցները: Նրանք չէին խորշում չափազանցություններից՝ հայտարարելով, թե դաշնակցականներն ուզում են վերականգնել հայկական թագավորությունը մինչև Վորոնեժ, և որպեսզի կառավարությունը ստիպված չլինի նորից գրավել Կովկասը, պետք է ամենախիստ քայլերը ձեռնարկի այդ հակապետական, անջատական կազմակերպության դեմ:

Ձերբակալվածները մեղադրվում էին հայ-թաթարական ջարդերը նախաձեռնելու, 1906 թ. օգոստոսին Էջմիածնում ցարական շինովնիկների դեմ հակապետական խորհուրդ հրավիրելու մեջ: Շուրջ չորս տարի տևած հետաքննության ընթացքում Շչեգլովիտովի կամակատար Լիժինը նյութեց քառասուն հազար էջանոց գործ, որն ստացավ «Դաշնակցության գործ» անվանումը<sup>13</sup>:

1909 թ. հուլիսին հայոց կաթողիկոս Մ. Իզմիրլյանը Վ. Պուլից ուղևորվում է Ս. Պետերբուրգ և ցարի հետ հանդիպման ժամանակ նրան խնդրում է դադարեցնել քաղաքական հետապնդումները Կովկասում, իսկ բանտարկյալների ազատ արձակել: «Ձերդ Օծությունը դեռ Կովկաս չհասած, նրանք ազատված կլինեն»<sup>14</sup>, - սա բառացի մեջբերումն է ռուսական կայսր Նիկոլայ Երկրորդի պատասխանից, սակայն, ինչպես Լեոն է գրում իր հուշերում, «այս մի «ամենաողորմած» ստախոսություն էր»<sup>15</sup>:

1908 թ. մինչև 1912 թ. գարունը առանձին կարևոր գործերի քրննիչ Ն. Լիժինի հրահանգով հարցաքննվեցին կամ ձերբակալվեցին ավելի քան 2000՝ տարբեր խավերի ու զանազան զբաղմունքների տեր մարդիկ: Ձերբակալվածների թվում էին մի շարք ճանաչված դաշնակցական գործիչներ ու մտավորականներ՝ Ավ. Ահարոնյան, Հովհ. Թումանյան, Հ. Օհանջանյան և ուրիշներ: Այս գործով մեղադրվող մի շարք գործիչներ էլ գտնվում էին արտասահմանում՝ Ս. Ջավարյան, Ն. Դուման, Հովհ. Քաջագունի և այլք:

Լիժինի կատարած հարցաքննություններում ամենից մեծածավալն ու Դաշնակցության համար վտանգավորը նախկին դաշնակցական խմբապետ Միհրանի

<sup>10</sup> Դրոշակ, Ժնն, 1909, N 9, էջ 124:

<sup>11</sup> Պետական Դումայի աջակողմյան թևի ղեկավարներից, «Ռուս ժողովրդի միություն» սևհարյուրակային կուսակցության՝ «Միքայել հրեշտակապետի միության» խմբակցության ղեկավար:

<sup>12</sup> Սևհարյուրակայինների միության ղեկավարներից, Պետական դումայի անդամ:

<sup>13</sup> ՀՅԴ դատական գործի մասին տե՛ս Հայաստանի ազգային արխիվ [(այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 4047, дело о партии Дашнакцутюн, сборник допросов в 7 т.]:

<sup>14</sup> Ակունի Է., Բողոքի ձայն, Բոստոն, 1911, էջ 83:

<sup>15</sup> Լեոն, նշվ. աշխ., էջ 226:

(Գաբրիել Քեշիշյան) դավաճանական ցուցմունքներն էին: Միևուրեք, դեռևս 1907-ին հայաձվելով Դաշնակցության ղեկավարների կողմից («Կովկասյան գործունեության նախագծին» դեմ դուրս գալու և կուսակցության ներսում «Ժամանակավոր զինվորական խորհուրդ» ստեղծելու համար), հանձնվել էր ցարական իշխանություններին և իր վրեժը լուծում էր մատնությունների միջոցով: Նա էր մատնել Ռոստոմին (Ստեփան Ջորյան), Ս. Ջավարյանին, Խաժակին (Գարեգին Չազայան) ու Ն. Դումանին, Հ. Շահրիկյանին ու Ալ. Շարաֆյանին, Ե. Թովյանին, Համո Օհանջանյանին և շատ ուրիշ գործիչների: Նա տեղյակ էր Դաշնակցության գործելաձևին, ծածկագրերին, ճանաչում էր մի շարք պաշտոնյաների, որոնք կաշառված էին Դաշնակցության կողմից, և այդ բոլորը հայտնեց տխրահռչակ Լիժնին: Ավետիս Ահարոնյանին նա մատնել էր որպես Դաշնակցության բարձրագույն ահաբեկչական մարմնի անդամի՝ վրեժխնդիր լինելով Ահարոնյանից այն բանի համար, որ վերջինս 1906 թ. վտարել էր իրեն և իր կողմնակիցներին Թիֆլիսի «Հատաջ» թերթի խմբագրությունից<sup>16</sup>: Ահարոնյանը ձերբակալվեց և շուրջ երկու տարի մնաց բանտում (Բաբու, Ռոստով, Նովոչերկասկ): Չդիմանալով բանտային ծանր պայմաններին՝ հիվանդացավ, և թոքերից արյունահոսություն սկսվեց: Միայն այն բանից հետո, երբ նշանավոր մտավորականներ Անատոլ Ֆրանսը, Վիկտոր Բերարը, Պրեսանսեն և ուրիշներ համատեղ կոչ ուղղեցին Ստոլիպինին՝ Ա. Ահարոնյանին բանտից ազատ արձակելու համար, Ահարոնյանը դուրս բերվեց բանտից՝ քսան հազար ռուբլի երաշխավորությամբ: Ոստիկանության հսկողությունից խուսափելով՝ Ահարոնյանը բանտից նոր դուրս եկած Խաժակի և Ալ. Իսահակյանի հետ անցավ Արևմտյան Հայաստան, ապա՝ Կ. Պոլիս<sup>17</sup>: Թե ինչպիսի ծանր պայմաններում էին պահվում ձերբակալված հայերը, որոշակի պատկերացում են տալիս բանտարկյալների հարազատների հեռագրերը՝ ուղղված արդարադատության նախարարին. «Բանտը շինված է 250 մարդու համար, մինչդեռ այս պահուս այնտեղ 800-ից ավել կալանավորներ կան: Բանտային շենքը գտնվում է քաղաքի ամենացած տեղը, ուր անպակաս է տենդր... Շատերը ծանր հիվանդ են – թոքախտով, ոսկրացավով, նեքրասթենիով, աչքացավով»<sup>18</sup>:

Չպետք է կարծել, թե ՀՅ Դաշնակցության Արևմտյան բյուրոն անտարբեր հայացքով նայում էր, թե ինչպես է խորտակվում իր արևելյան հատվածի մարտական և մտավոր ուժը: 1909 թ. օգոստոս-սեպտեմբերին Վառնայում գումարվեց ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովը: Այստեղ քննարկվեց Կովկասում կուսակցության դիրքերի թուլացման հարցը: Ժողովը նախագահում էր Ս. Ջավարյանը, որը խիստ որակումներ տվեց ռուսական միապետական համակարգին՝ Ռուսաստանը նմանեցնելով Չինգիզ խանի ստեղծած կայսրությանը<sup>19</sup>:

<sup>16</sup> Հայրենիք, Բոստոն, 1930, N 7, էջ 72:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>18</sup> Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 37:

<sup>19</sup> Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 2, Թեհրան, 1982, էջ 108:

Արևմտահայ դաշնակցականներն իրենց կարեկից կոչն էին ուղղում սահմանից այն կողմ բռնություններից ճնշված կուսակիցներին<sup>20</sup>: Կատարվում էին դրամահավաքներ՝ հոգուտ բանտարկյալների: Այդ նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգներ է ուղևորվում է. Ակնունին (Խաչատուր Մալումյան): Այնտեղ նա տեսակցում է մի շարք քաղաքական դեմքերի, այդ թվում նաև նախագահ Թավթի հետ: Այս շրջանում գրում է «Բողոքի ձայն» գրքույկը, որը նվիրված էր ցարական բռնարարքներին և թարգմանվեց անգլերեն Political Persecution անունով<sup>21</sup>:

Դաշնակցության ջանքերով միայն 1910 թ. վերջին ու 1911 թ. սկզբին Միացյալ Նահանգների և Կանադայի երեսուներինգ քաղաքներում տեղի ունեցան ցույցեր՝ ի նպաստ կովկասահայ քաղաքանտարկյալների<sup>22</sup>: Իսկ կուսակցության Արևելյան բյուրոյի վիճակը, իրոք, ծանր էր: Դաշնակցության կովկասյան մարմիններն ամբողջովին անցել էին ընդհատակյա գործունեության: Այս առնչությամբ Հ. Տասնապետյանը նշում է. «Կովկասի կենտրոնական կոմիտեները, եթե գոյություն ունեին, փաստորեն կենդանի կապ չէին պահում Երկրի և արտասահմանի հետ»<sup>23</sup>: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ 1911-ի օգոստոսի 17-ից մինչև սեպտեմբերի 17-ը Կ. Պոլսում գումարված 6-րդ ընդհանուր ժողովին մասնակցում էր Արևելյան բյուրոյից միայն մեկ պատգամավոր՝ Ռոստոմը, այն էլ ոչ թե Կովկասից, այլ՝ Կարինից:

Խիստ հետապնդվում էր դաշնակցական մամուլը: Ականատեսը գրում է. «գրեթե 2-3 օրը մի խմբագրատուն էինք փոխում, մի օր հավաքվում էինք մեկի մոտ, երկրորդ օրը ուրիշի: Հանդիպում էինք իրար երեկոները և գիշերները, փախստական վիճակի մեջ գաղտագողի խմբագրում էինք թերթը... Սովորական էր այն ժամանակ ասել, թե Դաշնակցական օրգանի «պատասխանատու խմբագրի» միակ «իրավունքն» է փակվելիք թերթի պատճառով բանտ նստելը»<sup>24</sup>:

«Դաշնակցության գործի» առումով դատավարությունը 2 անգամ հետաձգվեց, ձերբակալվածներից շատերը ստիպված եղան մինչև 4 տարի բանտ նստել՝ չնայած նրանց մեղքը դեռևս ապացուցված չէր: Այդ ընթացքում եղան նաև մահացության դեպքեր: Գործի մեծ ծավալների մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ միայն 5 ամսվա ընթացքում Շուշիի, Փոթիի և Էջմիածնի փոստային վարչությունները Նովոչերկասկի դատական քննիչին են ուղարկել ավելի քան քսան հազար հեռագիր, որոնք վերաբերում էին Դաշնակցությանը (Մ. Վարանդյանը նշում է, որ այդ հեռագրերը նախօրոք դաշնակցականների ձեռքով խմբագրվում էին)<sup>25</sup>:

<sup>20</sup> Դրոշակ, Ժնն, 1909, N 2-3, էջ 40:

<sup>21</sup> Տե՛ս Լազյան Գ., Հեղափոխական դեմքեր, Կահիրե, 1945, էջ 132:

<sup>22</sup> Ակնունի Է., նշվ. աշխ., էջ 91:

<sup>23</sup> Տասնապետյան Հ., ՀՅ Դաշնակցության կազմակերպական կառույցի հոլովույթը, Բեյրութ, 1985, էջ 74:

<sup>24</sup> Հայրենիք, Բոստոն, 1922, N 2, էջ 98-99:

<sup>25</sup> Վարանդյան Մ., ՀՅ Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 526:

1911 թ. վերջին «քաղաքական հանցավորներն» ու շուրջ 500 վկաները տեղափոխվեցին Պետերբուրգ, որտեղ կայանալու էր դատավարությունը: Չնայած որ սկզբնական շրջանում մեղադրյալների թիվն ավելի շատ էր, մեղադրյալների վերջնական ցանկում ընդգրկվեց 159 հոգի<sup>26</sup>: Հայ հեղափոխականներին դատելու էր Ծերակույտի հատուկ աստանը՝ Ա. Կրիվացովի գլխավորությամբ, մյուս անդամներն էին Վ. Մարկևիչը, Ն. Գարինը, Վ. Բախտիյարովը, և Ա. Պոլլանը, դատախազներն էին Վ. Սերգենը և Վ. Ակսակովը<sup>27</sup>:

1912 թ. հունվարի 17-ին դատական նիստը հայտարարվեց բացված: ՀՅ Դաշնակցությունը գումար չէր խնայում՝ մեղադրյալների պաշտպանությունը լավագույնս ապահովելու համար: Ամբաստանյալներին հանձն էին առել պաշտպանել ժամանակի այնպիսի հայտնի փաստաբաններ, ինչպիսիք էին Օ. Գրուզենբերգը, Ն. Կարաբչևսկին, Վ. Մակլակովը, Ն. Մուրավյովը, Ալ. Բոբրիշևը, իշխան Լ. Անդրոնիկովը, Ալ. Կերենսկին (հետագայում՝ Ժամանակավոր կառավարության վարչապետ), Ն. Մոկոլովը և շատ ուրիշներ: Փաստաբանների մեծ մասը Մոսկվայից և Պետերբուրգից էր, ընդհանուր պաշտպանների թիվն անցնում էր 60-ից: Ալ. Կերենսկին, որը պաշտպանելու էր մոտ 14 դաշնակցականի, նույնիսկ ուսումնասիրել էր հայ ժողովրդի պատմությունը՝ լավ պատրաստված ու տեղեկացված լինելու համար<sup>28</sup>:

Հետաքրքիր տեսարան էին ներկայացնում ամբաստանյալները դատավարության ընթացքում՝ դաշնակցական մարտիկների կողքին նստած էին պոետներ (օր.՝ Հ. Թումանյան), վատ հագնված գյուղացու կողքին՝ միլիտանտեր (օր.՝ Ալ. Մելիք-Ազարյան) և այլն: Նրանք բոլորը մեղադրվում էին 102-րդ հոդվածով, այսինքն՝ մեղադրվում էին որպես հակաօրինական կազմակերպություն, որն իր առջև նպատակ է դրել բռնությամբ, քաղաքական ու տնտեսական ահաբեկումի միջոցով տապալել օրենքներով սահմանված վարչաձևը:

Դատապարտյալներին բաժանել էին 30 խմբի. էթե առաջինում կար ընդամենը 2 հոգի, կային նաև այնպիսի խմբեր, որոնց մեջ ներառվածների թիվը հասնում էր 30-ի<sup>29</sup>: Դատավարության նիստերը տեղի էին ունենում ամեն օր՝ ժամը 12-15-ը և 16-19-ը: Դատական նիստերն ընթացան առանց մեղադրող կողմի ամենակարևոր վկա Միհրանի, որը 1910 թ. սեպտեմբերի 6-ին գնացքի վագոնում սպանվել էր դաշնակցական Միշայի (հետագայում՝ Ասկերանի հերոս Դալի Ղազար) ձեռքով: Արդեն փետրվարին հայտնի դարձավ, որ այն սենյակից, որտեղ պահվում էին իրեղեն ապացույցները, անհետացել են մի շարք նյութեր: Կրիվացովի հրամանագրով Նիկոլայ Լիժինը, որի մոտ էր այդ սենյակի բանալին, ժամանակավորապես հեռացվեց «սենյակի վարիչի» պաշտոնից: Մակայն սա ընդամենը փոքր մասն էր այն բոլոր խախտումների ու կեղծիքների, որ կատարել էր Նովոչերկասկի դատական քննիչը:

<sup>26</sup> Մեղադրյալների անվան ցանկը տե՛ս ՀԱԱ, дело о партии Дашнакцутюн, т. 6, с. 253-260.

<sup>27</sup> Նույն տեղում, հ. 7, էջ 1:

<sup>28</sup> <http://www.port-folio.org/2009/part128.html>

<sup>29</sup> Закавказская речь, Тифлис, 1912, N 23.



Դատավարության ժամանակ ողջ պաշտպանության կողմից ելույթ ունեցավ Օսկար Գրուզենբերգը, որը մոտ 30 գործի վերաբերյալ հարցաքննություններում ցույց տվեց Լիժինի կատարած կեղծումները՝ ի վնաս միայն մեղադրվող կողմի, և խնդրեց գործն ուղարկել հետաքննության: Ծերակույտը նոր բացահայտված անակնկալ փաստերի պատճառով, խորհրդակցելու համար ընդմիջում վերցրեց<sup>30</sup>: Պաշտպաններից Բ. Ուտևսկին իր հուշերում գրում է. «Խորհրդակցությունը երկար տևեց, մոտ 2 օր: Խորհրդակցում էին նրանք ոչ թե իրենց կազմով, ինչպես պահանջում էր օրենքը, խորհրդակցում էին նրանք, ինչպես շուտով հայտնի դարձավ՝ Շչեգովիտովի հետ»<sup>31</sup>: Դատավարությունը վերսկսվեց միայն երրորդ օրը, և Կրիվցովը հայտարարեց, որ թեև որոշված է նիստը շարունակել, սակայն կեղծիքների փաստը ապացուցվելու դեպքում դատավճռի ժամանակ այդ ամենը հաշվի կառնվի:

Որոշվեց կատարել ձեռագրաբանական փորձաքննություն, որը պաշտպանների խնդրանքով հանձնարարվեց Ա. Ջախարինին (նա համարվում էր լավագույն ձեռագրաբանը կայսրությունում): Մոտ մեկ շաբաթից Ջախարինը դատարանին ներկայացրեց փորձաքննության արդյունքները. նա նկատել էր Լիժինի կեղծած փաստաթղթերը և խոշորացրել, դրանց շնորհիվ հստակ երևում էին ջնջված բառերը, ավելացրած տառերն ու թվերը<sup>32</sup>: Պարզվեց, որ Լիժինն այնքան էր հեռու գնացել, որ նույնիսկ կեղծել էր ավագ դատախազ Աստրախանցևի ստորագրությունը<sup>33</sup>: Կրիվցովի հրահանգով դատական գործ հարուցվեց Նովոչերկասկի հատուկ գործերով քննիչի նկատմամբ:

Լիժինի կատարած կեղծիքների բացահայտումը կշեռքի նժարը փոխեց հոգուտ ամբաստանյալների: Մարտի սկզբին ավարտվեցին վերջիններիս հարցաքննությունները, և մարտի 8-ին մեղադրական ճառով հանդես եկավ դատախազ Սերգենը: Ահա թե ինչպես է նա բնութագրում ՀՅ Դաշնակցությանը. «Եթե ես լինեի արձանագործ, պիտի պատկերացնեի Դաշնակցությունը մեկ արձանով, որու պատվանդանին վրա կփորագրեի այդ արյան բաղնիքի մեջ գալարվող բոլոր գոհերը, աջ կողմը կը կանգնեցնեի Համագասպ Օհանջանյանը, ձախ կողմը՝ Խաժակը, իսկ վերը, գագաթին՝ Ահարոնյանը արծիվի կերպարանքով, որ կծծէ անվերջ հոսող արյունը»<sup>34</sup>:

Դատախազն իր ելույթն ավարտում է մարտի 9-ին՝ առաջարկելով անմեղ ճանաչել 15 մեղադրյալների, այդ թվում՝ նաև Հովհաննես Թումանյանին: Իսկ մնացածներին մեղադրում է վերը նշված 102-րդ հոդվածով: Մարտի 11-ից իրենց պաշտպանական ճառերով հանդես եկան փաստաբանները, դա տևեց մի ամբողջ շաբաթ:

1912 թ. Մարտի 20-ը դատավարության վերջին օրն էր. ժամը 14-ին ձերակույտը

<sup>30</sup> Նույն տեղում, N 57:

<sup>31</sup> Утевский Б. С. Воспоминания юриста, М., 1989, с. 46-47.

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>33</sup> <http://www.port-folio.org/2009/part128.html>

<sup>34</sup> Վարանդյան Ս., նշվ. աշխ., էջ 531:

հրապարակեց իր դատավճիռը<sup>35</sup>: Օրենքի համաձայն, դատական նիստը գումարվել էր բաց դռների ներքո, պահակախումբը կրկնակի ուժեղացվել էր: Հետաքրքիր է այն փաստը, որ մեղադրյալների պաշտպան Լուարսաբե Անդրոնիկովը դատավճիռը կարդալու ժամանակ լարվածության հետևանքով ուշաթափ եղավ<sup>36</sup>: Ատյանի դատավճիռը սպասվածից ավելի մեղմ էր: 94 հոգի ազատ արձակվեցին, և ընդամենը 52 հոգի դատապարտվեցին հիմնականում կարճաժամկետ բանտարգելության ու արտրի (նրանցից չորսը՝ Համազասպ Օհանջանյանը, Սարգիս Մանասյանը, Հովհաննես Ղազարյանը և Արշակ Մուրատովը, արտրվեցին Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի): Երկար տարիների բանտարկության ընթացքում մեղադրյալներից երկուսը՝ Սարբազ Խեչոն ու Չիչինյանը, մահացել էին, իսկ Հովհաննես Մետնիկյանն էլ խելագարվել էր:

Ահա այսպիսի վախճան ունեցավ XX դարակազմի ադմկահարույց գործերից մեկը: Դատարանից դուրս գալուց հետո արդարացված հայերն իրենց փաստաբանների հետ՝ մոտ հարյուր հոգի, հավաքվեցին ռուսական մայրաքաղաքի ամենահայտնի ռեստորաններից մեկում՝ Դանոնում, և նշեցին իրենց հաղթանակը:

Ինչով էր պայմանավորված այսպիսի մեծ քաղաքական գործի՝ այսքան մեղմ դատավճռի հանգելը: Ինչպես և այս ամենը նախաձեռնելիս, եզրահանգման ժամանակ նույնպես, ցարական կառավարությունը հաշվի առավ ներքին ու արտաքին հանգամանքները: Ներքին պատճառներից ամենակարևորը, թերևս, Լիժնի կեղծիքների բացահայտումն էր, չնայած որ նա այդպես էլ չդատվեց: Շչեզլովիտովը թույլ չտվեց, որ իր հավատարիմ ծառային դատեն օրենքի ամբողջ խստությամբ: Նախարարի ջանքերով, Նիկոլայ Լիժնին ճանաչեցին հոգեկան հիվանդ, և նրա նկատմամբ հարուցված գործը կարճվեց: «Նույնիսկ դատավորներն ու դատախազներն էին քմծիծաղ տալիս, երբ խոսվում էր Լիժնի՝ հոգեկան հիվանդ լինելու մասին»<sup>37</sup>: Քաղաքականությունը մեծ օգուտ բերեց նաև ազատական մամուլը, որտեղ քննադատում էին Լիժնի կեղծիքներն ու կարեկցանք հայտնում հայ բանտարկյալների նկատմամբ: Եվ վերջապես, մեծ դեր խաղացին Դաշնակցության վարձած պաշտպանները, որոնք իրենց վստահված գործին մոտեցան ամենայն լրջությամբ, բարձր պրոֆեսիոնալիզմով և հաղթանակի մեջ հսկայական ներդրում ունեցան:

Սակայն այս ամենից բացի կա նաև արտաքին մի պատճառ, որը, հնարավոր է, ամենամեծ դերակատարումն ունեցավ: Դ. Անանունը գրում է. «Ամեն անգամ երբ արտաքին քաղաքականության մեջ տիրում էր խաղաղություն և վստահություն՝ ռուսահայերի հասարակական վարկը կորցնում էր իր արժեքը: Հենց որ խախտվում էր միջազգային հավասարակշռությունը՝ ռուսահայերն արժանանում էին հատուկ

<sup>35</sup> Տե՛ս ՀԱԱ, Կ. 6, Ը. 277-317.

<sup>36</sup> <http://www.port-folio.org/2009/part128.html>

<sup>37</sup> Утевский Б. С., նշվ. աշխ., էջ 48:

ուշադրության»<sup>38</sup>: Այս անգամ էլ ռուսական կառավարությունը հավատարիմ մնաց հայերի նկատմամբ մշտապես վարվող քաղաքականությանը: 1912 թ. միջազգային իրադրությունը բավական լարված էր, խորացել էր բալկանյան ճգնաժամը, և մեծ էր հավանականությունը, որ ամեն պահի կարող է սկսվել ռուս-թուրքական պատերազմ, իսկ այդ պատերազմի ժամանակ շատ էական էր հայերի քաղաքական դիրքորոշումը: Եթե 1908-1909 թթ. Դաշնակցությունն ու Իթթիհատը ամբողջ աշխարհի առաջ քարձրաձայնում էին իրենց դաշինքի մասին, այժմ այդ երբեմնի դաշինքից ոչինչ չէր մնացել՝ բացի ձևական շփումներից: Ճիշտ է, երկու կուսակցություններն էլ չէին շտապում պաշտոնապես խզել կապը, սակայն ամեն մի քաղաքագետի համար պարզ էր, որ հնարավոր պատերազմի դեպքում հայ ժողովուրդը, հանձին ՀՅԴ-ի, դաշնակցելու է ռուսական կողմի հետ:

ПОЛИТИКА ЦАРИЗМА И СУДЕБНЫЙ ПРОЦЕСС  
В ОТНОШЕНИИ АРФ ДАШНАКЦУТЮН (1908-1912 гг.)

ДЖЕЛОЯН А. Р.

Резюме

После первой русской революции в стране были основаны "военно-полевые" суды, подвергшие смертной казни тысячи людей. Расправившись с основными русскими партиями, царское правительство устремило свой взор на отдаленные районы. Из кавказских партий тяжким гонениям и преследованию подверглась АРФ Дашнакцутюн. С декабря 1908 г. в е, рядах начались обыски и аресты, закончившиеся громкими судебными процессами.

<sup>38</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական գարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 504: